դահճատուն պահականոց, ձիանոց, ևլն. պալատի դուռնաւոր ապակիներն մինչև Դիատին կը շողշողային։

Կաւանդեն թէ պարսպի շինութեան միջոցին աղջիկ մի գրած են մէջը՝ ողջ ողջ հիւսած, և թէ դեռ շատ ժամանակ չէ, պարիսպն քանդուած միջոցին շատերն ականատես եղած են, տեսած են գլխի տեղն և ծամերն, որ երկար ատեն քարերու միջից դուրս ցցուած և կախուած կար։ Այսպէս կանէին, կաւանդեն որպէս զի բերդի հիմը հաստատ լինի։

Թօփրադ-դաղի ընդարձակ քաւշան ունի, որ բռնած է Մօլլա-Սիւլէյման և Խաչլու գիւղերու քաւշաններու միջավայրը արևելից և արևմտից. իսկ լեռնային մասը աւանէս կը սկսի, կը տարածուի ի հիւսիս մինչև Շահ-կեօլ լեռներու գագաթը Ի. սահմանը. դաշտայինը ի հարաւ և ի հարաւ արևելս մինչև Մսուրի, Շամեան, Միրանկներ և Մամրտան գիւղերու քաւշաններն, և կորոգուի Խոփուզ և Խաչլու գետակաց ջրերով։

Աւանիս ժողովրդեան կեանքն տակաւ առ տակաւ քաղաքականէ երկրագործականի փոխուելով՝ օր ըստ օրէ շինութիւններն ի դաշտ կը մերձենան [1]։

Հին շուկայի հետքերն կերևին այժմեան շուկայից շատ բարձր, որ երկարացած է բերդի հարաւային ստորոտան արևմտեան ուղղութեամբ, որ ըստ աւանդութեան 1500 կրպակ կը պարունակէր, այս քանի տարիներս նաև

բաղմանալով գաւառակներու բաժանած և իշխած են, շատ անգամ իրարու ձեռքէ յափշտակելու համար արիւնռուշտ պատերազմներ մղած են իրարու դէմ։

1. 1891 թուականին այս տեղ խումբ մի զինուոր և զինուորական պաշտօնեաներ հաստատուեցան, որով դարձեալ շինութիւնք սկսան բարձրանալ վերի կողերը։